կանն եւ այնպիսի տառեր կը գործածենք որ քիչ շատ նման ըլլան բնագրին։

ինդ առանց գնղէն։
Վ ալ փնէնում Հանդիպի․ինծարք
ինուաւրն իբալինուվորդաւրաթա
համբուրէ․խնդմոդանցնէզըողորա
ալին։ Օղոզ գունսիրավլինևրս ձէնև
ածալկլի քանդծառնըղ խնկենին․
ով կուամիջացդ գլրկածէ կանայր
ընայքանզնչդաւրին։
Իսեւ յովանէսի թուլկուրանցլ փառ
աւորէզհայրեւզորդի ալ'վոյսաւրա
թնինհողդառնայ' ւէհիւրն անշէջ
ւրսիրելին։․
Թվին․ռ̃ ճ․ է յունիս․տպեցաւ։
ձեռամբ Փարմանիս ⸗⸗⸗⸗⸗⸗⸗⸗

Ըսինք՝ մատենկանս ուր տպուիլն առ այժմ որոշակի չենք կարող ըսել, եւ ասոր պատճառն այն է՝ որ հոս Կերլա, ափ մը քաղաքի մէջ, ուր այժմ կը գտնուինք, ո՛չ մեծ մատենադարաններ ունինք մեր ձեռաց տակ եւ ո՛չ ալ մեծամեծ գիտնականներ, որոնցմէ կարենանք աւելի լուսաւորութիւն մ'ընդունիլ։ Սակայն կը յուսանք որ ապագան, եւ թերեւս մօտ ատենի մէջ, ըստ բաւականի ստուգէ ասոր ուր տպուած ըլլալը։ Ասոր երկու ճամբայ կայ․ մէյ մը գիտնալ թէ Փարմանն[1] ո՛վ է․ երկրորդ համեմատել այս տպագրութեան գրերը Վենետիկի Աբգարեան Սաղմոսին, Հռոմի 1584ին տպուած Գրիգորեան տումարին, Յ․ Տէրզնցւոյն 1587ին նոյնպէս Վենետիկ տպած միւս Սաղմոսին, եւ մանաւանդ Յովհաննէս Քարմատանին 1616ին Լվով տպած Սաղմոսին հետ։ Ընտարակոյս գիրն ասոնց մէկուն հետ նոյն պիտի ըլլայ։

Առաջիկայ յօդուածը գրողը՝ վերյիշեալ տպագրութիւններէն եւ ոչ մէկը տեսած է․ ուստի իրեն համեմատելն անկարելի է։ Էջմիածնի, Երուսաղեմայ, Վենետկոյ, Վիեննայի ու Մոսկուայի մատենադարաններն անտարակոյս ունենալով հայ տպագրութեան երախայրիքներէն մին կամ միւսն, իրենց դժուար չէր ըլլար մատենկանս գրերն անոնցին հետ համեմատել ու տպագրութեան տեղն ստուգել[2]։

Կերլա։ Հ. Գ. ԳՈՎՐԻԿԵԱՆ

[1] Եթէ չենթադրենք ան ալ որ "Ձեռամբ Փարմանիս" կրնայ նշանակել ձեռքն եղած Հրամանագրին (ֆերման) զօրութեամբը, որ բոլորովին անհաւանական չ'երեւար։ Այս դէպքին մէջ այս կռուանէն ալ կը զրկուինք։

[2] Հռոմի յիշեալ տպագրութեան հետ, ինչպէս նաեւ այլ հնագոյն տպագրութեանց հետ, որոնք Հայկական Մատենագիտութեան մէջ չեն յիշատակուիր, համեմատեցինք, բայց ամենեւին նմանութիւն չունին։ — Մենք այժմ ունինք հայ տպագրութեան ուրիշ երախայրիք մը մեր ձեռքն որ ցայսօր գտնուած տպագրութեանց հնագոյնն է, զոր ի մերձաւոր կը ծանօթացընենք ժամանակին մեր ընթերցողաց։ ԽՄԲ․

## ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱԾՔ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

1. Լրագիր մ'ուրիշ բան չէ, բայց եթէ բաց նամակ, զոր լրագրապետը առ ամենայն ընթերցողս կ'առաքէ։

2. Շատ լուր բերող լրագիրն՝ հարկաւ ճշմարիտ ու սուտ լուրերուն մէջ շատ խտրութիւն չ'ըներ, ինչպէս նաեւ շատախօս մարդը։

3. Մարդ մը զմեզ մէկ անգամ միայն խաբէ՝ կը բարկանանք, կը սրտմտինք, յաւիտեան չենք մոռնար․ իսկ լրագիրը հազար անգամ ալ խաբէ՝ բոլորովին անհոգ կ'ըլլանք։ — Զարմանալի երեւոյթ։

4. Ստուգիւ ուրախալի բան է, որ այսօրուան օրս կրթեալ անձ մ'առանց լրագրի չէ կարող կենալ, իբրեւ օրըստօրեայ կերակրոյն կը կարօտի։ Ցաւալին այն է միայն՝ որ այս մտաւոր սնունդն՝ ներկայ ժամանակս մարմնոյ սննդեան պէս, այլեւայլ կերպով կը նենգուի ու կը խարդախուի։

5. Ո՞ւզես լրագիր կարդացող մը փոքր ի շատէ ճանչնալ․ հարցո՛ւր թէ կարդացածն ինչ տեսակ լրագիր է։

6. Լրագիրներն յաճախ կը պնդեն հասարակաց ձայնն հանած ըլլալ, մինչդեռ ընթերցողաց ականջը՝ մի միայն ձայն կը հանէ․ այն է՝ — խմբագրինը։

7. Զանազան յօդուածագիրներէ շարադրուող լրագիր մը կը նմանի բազմախորտիկ ճաշի, ուր բազմաթիւ ծառայք իրարու հետ մրցելով կը սպասաւորեն։ Համեղ կերակուր բերողներուն՝ քաղցրահայեաց ակնարկութիւն կ'ըլլայ, իսկ մէկալներուն՝ քստմնելի կերպարանք։

8. Ամենայն լրագիրք մեծաւ փութով կ'աշխատին իրենց բաժանորդաց սէրն ու համակրութիւնը վաստըկելու, բայց ոմանք ի զուր եւ ընդ վայր․ որովհետեւ չեն գիտեր այն գաղտնիքը՝ թէ ընթերցողները լիովին զոհ ընելով միայն կարող են այդ վախճանին հասնիլ։

Հ. Ռ. Պ.

digitised by A.R.A.R.@